



Դուքեն Սևակ

Չանգակնե՞ր, զանգակնե՞ր...

Չանգակնե՞ր, բարի՛, բարի՛ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գումական լեզուն,
Խոսք ելլել կ'ուզե արյունը վազուն...
Կը լոե՛ք, բարի՛, բարի՛ զանգակներ:

Արդյո՞ք, ձեր միսթիք հագագն արույրե,
Ուր կեղև՝ պատեց աղոքքի փոշին,
Եվ ուր կ'երազե՞ր խունկի գոլորշին,
Հեղակած ցավեն՝ անզո՞ր կը լոե՞ :

Ո՛՛: Ձեր դարավոր հոգին պղնձի-
- Որ շա՞տ, շա՞տ հաճախ տեսեր է Բարին,
Հաղթված Չարեն- այժմ իր բարբառին
Ու իր Աստծույն վրա կը կասկածի...

Ա՛խ, որովհետև տեսաք ձեր բարձրեն,
Հավատավորներ հազարով, բյուրով,
Ինկած հեթանոս տապարով, բիրով-
Ձեր ոտքերուն տակ, երկյուղածորեն...

Ու ձեր գմբեթեն դիտեցիք անձայն,
Թե ինչպես խնկոտ տաճարներու մեջ՝
Որք, կին, ծերունի, բոցերով անշեշ,

Իրենց Աստծույն գահին զոհվեցան:

Բայց... զիտեք նաև, թե մեր դարավոր
Դիակներու բուրգը ամպերեն անցավ,
Ու մեր արյունի ժահրեն նեխնեցավ
Մըրություններու ծոյլ գունտն երկնավոր...

Արդ՝ ո՞ւր եք, չքնաղ խոստումներ Խաչին,
Եղբայրության զուր բարբառներ, ո՞ւր եք,
Կրակ կը փսխե հողն ամենուրեք,
Գետերն արյունով, դիակո՞վ կ'ուշչին...

Ու կիյնա այն, որ կը ծնկե ահով,
Զի քուրն ավելի արդար է Խաչեն,
Զի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,
Անոնց, որ կ'ապրին ուրիշի մահով...

Որովհետև դեռ հեռու է օրն այն,
Երբ գայլն ու զառնուկ սիրով արածին...
Թե ապրի կ'ուզե զառը նորածին՝
Պետք է իր ակոան սրե լոելյայն...

Լուռ եք, զանգակնե՛ր, Աստված է մեռեր:
Գույժ տվեք վաղվան, զի հասկը մեռավ.
Գույժ տվեք հայուն, զի ազգը մեռավ:
Զանգակնե՛ր, ծերո՛ւկ, բարի՛ զանգակներ...

Ինչպես կ'ուզեի ես ձեր պարանին
Կախվիլ ու ցնցել երկաթ բազուկով.
Անոնք, որ ինկան բյուրով, քովե քով,
Ձեր դողանջին հետ՝ լալու պետք ունին...

Հոգիիս հազար խուլ զանգակներով

Գոռացեք զանգեք ու կատաղորեն
Գահավիժեցեք ձեր երկաթ թառեն,
Ուրկե միայն լալ գիտցաք դարերով...